

բը ամէն բան տակնուվրայ ըլլալով, ի ուղղովիկոս ժե բանակ մը խրկեց 'ի Պոհեմիա, որուն ձախ թւին հրամանատարութիւնը կ'ընէր Սաւրիտիոս: Ինչ օրուան մէջ յարձակմամբ տիրեց Իրակա մայրաքաղաքին, և քաջութեանը ժամանակ մարդասիրութիւն գործածելով՝ ամէն խնամքը բանեցուց որ չըլլայ թէ զօրքը աւարառութեամբ յաղթութե փառքը մթնցընէ: Իոյն պիսի արագութեամբ տիրեց նաև Լկրա բերդաքաղաքին, և իրեն ճարտարութեան և քաջութեան նշանակները ցըցուց թէ Պաւիերայի բանակին հրամանատարութեանը ատեն, և թէ Սասցիայի պաշտպանութեանը ժամանակ, ի որենայի Վարդոս իշխանին դէմ: Եւ ամէն քաջագործութեանցը համար՝ Վաղղիոյ մարաշախտութեան գաւազանը ընդունեցաւ (1743):

Հետեւեալ երկու տարուան մէջ տրուած պատերազմաց ժամանակն ալ աւելի փառաւորութեամբ, երբոր հասակն սկսաւ առնուլ և ուժէ իյնալ, տէրութիւնը Համպորի դքսութեան մէջ այլ և այլ կալուածներ տուաւ իրեն, և տալուէ տարի քառասուն հազար Ֆրանք: Եւ իսողաղ առանձնութեան մէջ լուսնացուց Սաւրիտիոս իր կեանքը (30 նոյեմբեր, 1750). և մեռնելուն ատեն կ'ըսէր թէ՝ « Կեանքը երազ մըն է. իմն գեղեցիկ՝ բայց կարճատև երազ մը եղաւ »:

Սաւրիտիոս լուտերական ազանդի վերաբերելուն համար Սէն-Տընիի մէջ չկրցաւ թաղուիլ, այլ սրբոյն Վուվմայի եկեղեցւոյն մէջ ամփոփուեցաւ իր մարմինը, և ժամանակին անուանի ճարտար անդրիագործը Փիկալ՝ մեր դրած պատկերին մէջ երեցած մահարձանը կանգնեց անոր պատուոյն:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Անքրդիլ Տիւբերոնի Հնդկաստանի մէջ բրած ձամբորդութիւնները՝ Ջրադաշտայ գրքերը գտնայու համար:

Ինքըդիլ Տիւբերոն հազիւ քսանութեակու տարեկան կար երբոր Սաւրիգի մէջ առջի անգամ չորս թուղթ () էնտի գրուածք մը Սանտիտա-Սատիէն գաղափարեց, որն որ () էնտաւեստայի գրուածոց մասերէն մէկն է: Ինքըդիլ այնպէս վառուեցաւ՝ որ մէկէն միտքը դրաւ ետեւ ըլլալու ու թարգմանելու Վարսից ամբողջ աս օրինաց գիրքը, և որպէս զի լաւ սորվի Վարսից հին լեզուն հաստատեց որ այն կողմերը երթայ: Ինքըդիլ իր ժամանակի գիտնոց շատին իր աս միտքը յայտնեց, ինչպէս Սայլիէի որ թագաւորին գրատան վերակեցուն էր, Վարթէլմիին և Լէյլիւս կոմսին, որոնք սիրտ տուին և խոստացան ուսմանց պաշտօնեային հետ խօսելու 'ի նպաստ իրեն, և հնդկաց ընկերութեանէն խընդրելու որ իրեն ձեռնտու ըլլան: Բայց Ինքըդիլ անանկ վառուած էր, որ ատկերպով իր ուղեւորութեան ուշանալուն կասկածը զինքը անհամբեր կ'ընէր. բայց միանգամայն աղքատ ըլլալով՝ կարգէ դուրս միջոցի մը ձեռք զարկաւ, այսինքն առանց իրեն ազգականացը իմացընելու՝ հնդկային ընկերութեան զինուոր գրուեցաւ: Իր երթալը աս կերպով որոշելէն ետքը, մէկէն ճամբու պատրաստութիւն տեսաւ. ունեցածը՝ բոլոր բոլոր էր երկու շապիկ, երկու թաշկինակ, զոյգ մը գուրպայ, ստուճ մը ու եբրայական աստուածաշունչ մը. բնաւ մէկու մը մնաք բարովի չգնաց, և միայն իր եղբօրը սրտաշարժ հրաժարականը տալով, 7 նոյեմբերի 1754ին, ճամբայ ելաւ ոտքով՝ առտուն կանուխ քանի մը ընկերակիցներով, ստորին ըսպայ մը իրենց առաջնորդ ունենալով:

Սաւրիգէն դէպ 'ի Սորիան ըրած ուղեւորութիւնը վարժութիւն մ' եղաւ իրեն ծանր աշխատութեանց, զոր ա-

նանկ արութեամբ սրտի կատարեց, որ չէր յուսացուէր իր փափուկ կազմուածքէն և անցուցած կենաց ընթացքէն : Եւսանկ տասն օր ճամբան առաջ տարաւ, ցրտի անձրևի և ձեան տակ և տեսակ տեսակ վտանգներու մէջ, կէս մը ձիով և կէս մ' ալ ոտքով : Շատ անգամ ստիպուեցաւ մշակեալ դաշտերուն մէջէն անցնելով՝ անձամբ իր սնտուկը տանելու, և աղքատ հիւղ մը իջեանելով քիչ մը ատեն հանգչիլ, ուր որ վճարելով ալ հանդերձ հազիւ կրնար գտնալ խեղճ զինուորի մը հարկաւոր եղածին չափ բան : Իր ընկերներէն ամենայն կերպով կը զգուշանար. վասն զի բոլորն ալ անդգամ մարդիկ էին, որոնք իրենց անկարգութեանցը համար հայրենիքներէն դուրս կը վազնտուէին, և ինչուան իր զգեստին վրայ աչք տնկեր էին :

Եւ միջոցին Եւքրդիլի ճամբորդութեան ճայնը Լարիզ տարածուեցաւ, և բանը պաշտօնեային ականջն ալ հասնելով՝ իր ետեւէն Լօրիան խաւրեց կամաւոր զինուորաց համար սահմանեալ պարգևը՝ և միանգամայն հրովարտակ մը՝ որով թագաւորը իրեն 500 լիրա հասոյթ կը կապէր : Հնդկաց ընկերութիւնն ալ ձրի շնորհեց իր նաւերէն մէկուն մէջ խցիկ մը, և նաւապետին հետ մէկտեղ սեղանի նստիլ :

Եւթ ամէնէն ետքը Լոնտիշերի հասաւ. « 1755 օգոստոսի 10^{ին} ցամաք ելանք, կ'ըսէ, և մէկէն շիտակ տերութեան պաշտօնարանը գնացի : Սրահը լեցուն էր ոսկեհիւս և արծաթապատ զգեստներ հազնոդ պաշտօնակալներով և սպաներով : Եւ փառաւոր ու շքեղ ժողովականներու մէջ մարդ մը կար մօտ 6 ոտք բարձրութեամբ՝ նիհար, ճերմակ զգեստ հագած, և գլուխն ալ ոտք մը բարձրութեամբ գլխարկ մը գրած էր : Եւ էր Պ. Լանկրին որ գաղղիացւոց Հնդկաստան ունեցած երկիրներուն ընդհանուր տեղակալն էր : Պ. Սենթ-Լորէնն ունեցած յանձնարարութեան նամակս տուի իրեն, զոր առաւ կարդաց, ու առանց ինծի նայելու՝ վերջէն կը քննեմբսաւ : Եւ ատենը ես ճամբ

բորդութեանս վախճանը քանի մը խօսքով բացատրեցի իրեն. ինքը ամէն ըսածիս պատասխան՝ նամակը գրպանը դրաւ և շարունակեց սրահին մէջ վեր վար քալելը, լռիկ մնջիկ խօսելով իր երկու խորհրդականներուն հետ : Եւ որովհետեւ ոչ պաշտօնատար մըն էի և ոչ ալ զինուորական՝ ոչ որ ինծի օգնելու փոյթ ըրաւ, Եւ միջոցին որ Եւքրդիլ աս նեղութեան մէջ կը տառապէր՝ յանկարծ միտքն ինկաւ որ զօրաց հրամանատար Պ. Լուփելին յանձնարարական նամակ մը ունի, փութաց անոր վաղեց, որ ամանկ մարդասիրաբար ընդունեցաւ զինքը, մինչև մոռցնել տրւաւ խեղճին առջի ունեցած հոգերը :

Եւբոր իր քովի եղած քիչ մը ստակը լմրնալու վրայ էր, ազդու կերպով մը իր խեղճ վիճակը քաղաքապետին իմացուց, որ քննելով իր ընթացքը, յանձն առաւ ամիսը իրեն 65 ռուփի թոշակ տալու, որ տարին 1,900 Լաղղիոյ լիրա կ'ընէր, որով 1,400 լիրա աւելցաւ ան 500^{ին} վրայ զոր թագաւորը իրեն սահմաներ էր : Ինչուան 1760 այսչափ էր Տիւբերոնի թոշակը, որուն վրայ Պ. Լէկրիթը ամիսը 100 ռուփի ալ աւելցուց, որ ընդ ամէնը տարին 2,880 լիրա կ'ընէր, իր ունեցած վարժապետացը վճարելու համար :

Շատ ուրախութեամբ կ'անցընէր իր օրերը ուսումնասէր երիտասարդը Լոնտիշերի մէջ. բայց երկրին ներսերը ճամբորդութիւն մը ընելով հոն տեղի բնիկ հիւանդութենէ մը բռնուեցաւ, որով մահուան դուռն հասնելով հազիւ կրցաւ խալսիլ : Եւբոր առողջացաւ, միտքը դրաւ որ նաւով դէպ 'ի Պէնկալա երթայ օգտափոխութեան համար :

Եւյն ատենները Եւքրդիացիք եկեր և ջանտեռնակորը պաշարեր էին : Եւսումնասէր պատանին Լասսըմպազարի Լապապին ելաւ գնաց, որ ջանտեռնակորէն քանի մը օր հեռու էր, որպէս զի փութայ քաղքին օգնութիւն հասնելու : Բայց ճամբան իմանալով որ թըշնամիք յաջողութեամբ կու գան, տեսաւ որ Լապապին խրկած օգնութիւնը

ատենին չկրնար հասնիլ տեղւոյն հե-
ռաւորութեւր պատճառաւ, ասով ստի-
պուեցաւ նորէն պաշարուած քաղաքը
դառնալ: Դժի օրը իր երկու ծառայո-
ւիլը ոտքով տասը քառս ճամբայ ըրաւ.
բայց ան խեղճերը չկրցան դիմանալ աս
ծանր աշխատութեանը, որոնք ինչուան
ան օրը քանի մը վարունգէն զատ ուրիշ
բան չէին կերած. ուստի թողուցին զին-
քը: Դժի Վանգեսի մէջ նաւ մտնա-
լով եկաւ հասաւ Զանտեռնակորի դի-
մացը, ծպտեալ մուղրի մը ձեացած, ան
միջոցին որ քաղաքը անձնատուր կ'ըլ-
լար. հարկ էր որ անգղիացի պահապան
զօրաց գունդերուն մէջէն անցնելով
փախչէր: Եւ ատ անգամ իրեն առաջ
նորդներէն մատնուելու վտանգի մէջ
ինկաւ, և հազիւ հինգ օրէն սովով
տանջուած Վասսըմ պազար հասաւ:

Վաղղիայի նահանջող զօրաց հետ
ինքն ալ միացաւ ոտքով քալելով, ու
հազիւ թէ իրեն հարկաւոր եղածը հե-
տը առաւ: Եւ զօրաց սպարապետը,
չատ մարդասիրութիւն ցուցուց իրեն,
բայց իր սպաններէն ոմանց անհաճոյ ե-
ղաւ աս բանս. Տիւբէրոն որոշեց շու-
տով մը բանակը ձգել և նորէն Ռոնտի
չէրի դառնալ: Բայց սակայն սարսա-
փելի ճամբորդութիւն մըն էր որ պիտի
ընէր. վասն զի չորս հարիւր փարսախէն
աւելի էր ճամբան, և հարկ էր ()րիք-
սայէն, Վոռոմանտէն և ուրիշ անանկ
գաւառներէ անցնիլ՝ ուր երբեք եւրոպա-
ցի մը ոտք կոխած չէր: Հոս իրեն հան-
դիպած ծանր դէպքերը լսելու արժանի
են, որոնք Վոգուտապատ երթալու
ժամանակը պատահեցան:

«Երկու ռուփի ոսկիէն աւելի չունէի
կ'ըսէ, որոնք Զանտեռնակորէն բերած
ստակէս աւելցեր էին, և ուրիշ եօթը
ռուփի ալ՝ զորն որ ազնիւ բարեկամ
մը առանց իմանալուս գրպանս դրեր էր:
Երեւելեան պատմութեան մը հագեր էի,
սրունքներս ուռած, թամբի ատրճա-
նակ մը գօտիս խօթած, երկու գրպանի
ատրճանակ և սուր մ'ալ մէջքս, կա-
մայ և լակամայ ինքզինքս միսթարեցի
իմ ձեռագիրներուս կորսուելուն վրայ,

և վարժեցայ միանգամայն քսան ու մէկ
ամիս հնդկաստան կենալ, առանց
թուղթի, առանց գրքի, առանց կա-
րէոր բաներս ունենալու, և առանց օգ-
նութեան մը, անցագիր մը միայն ունե-
նալով, ան ալ առանձին մարդու մը կրն
քով դրոշմած՝ որ միայն ինչուան Վալ-
լասսօն բանի կրնար գալ: Ուստի հարկ
էր որ ես ինքնիրենս գլխուս ճարը տես-
նէի այնպիսի ժողովրդեան մը մէջ, որոնք
և ոչ Վաղղիացի անունը լսած էին և
կամ պատկառել գիտէին անկէ: Եւ յու-
սահատ ու խեղճ վիճակս իմ քաջասրը-
տութեան բարեյարմար սեպելով՝ սկսայ
ճամբաս առաջ տանիլ: Դնկէ քիչ մը
հեռու Վաճմահալ քաղաքը՝ ոտքիս
ուռեցքը այնպէս սաստկացաւ որ ձի մը
ունենալը ամենակարելի էր: Վնած
գրաստս ողորմելի բան մըն էր և ինծի
արժեց 18 լիրա Վաղղիոյ, համետի
տեղ լաթի կտոր մը գրի, և երկու
չուան ալ ասպանդակի տեղ կը ծա-
ռայէր ինծի:

«Տօնափուռի և ()ռանկապատի նա-
հանգներուն մէջ գիշերը վրայ հասնե-
լով, սաստիկ փոթորկի մը հանդիպե-
ցայ, և ճամբուն դժուարութիւնը վրայ
գալով վախս աւելցուցին: Դն սաստիկ
խաւարին մէջ, ձիս՝ թակարդի մէջ
բռնուած վայրենի փիղէ մը խրտելով
ինկաւ: Ուշատեն ()ռանկապատ հաս-
նելով գիշերուան մնացած կտորը ստի-
պուեցայ անպիտան իջեանի մէջ անցը-
նելու, ուր որ ամէն կողմէն քամի կը
բանէր:

Երբոր քաղաքներու մէջ կ'իջնայի՝
կամ հրապարակը ծառի մը տակ կը
պառկէի, և կամ խանի մը սրահին մէջ
գրեթէ բացօթեայ և կամ տեղացւոյ
մէկուն տանը տակ. ասանկ տեղեր ան-
կողինս ալ մեծ եղան կաշի մըն էր գե-
տինը փռած, վահանս, որուն տակը զէն-
քերս և ունեցած քիչ մը կահկարասիքս
կը դնէի, բարձի տեղ կը ծառայէր.
ձեռքս կը բռնէի ան չուանին ծայրը որ
ձիուս ոտքերուն կապուած էր, վախ-
նալով որ գիշերը չգողնան: Եւ որս կամ
հինգ ժամէն աւելի չէի քնանար, այս-

ինքն գիշերուան տասէն կամ տասնըմէկէն ինչուան առաւօտեան իրեքը կամ չորս . միշտ ջանալով որ ամենէն աւելի ուշ պառկիմ եւ ուրիշներէն աւելի շուտ արթննամ . եւ թէ որ աս զգուշութիւն չընէի , կրնային գիշերը ունեցածս գողնալ եւ միանգամայն իմ ընկերներէս զըրկուիլ , եւ առաւօտն ալ ուշ ճամբայ ելլել , :

Եւ քրդիլ իր գլխէն անցած բաները առաջ տանելով կը պատմէ . “ Եւկ որ մը ան միջոցին որ արեւը ելլելու վրայ էր՝ քացի ընկերներս արթնցուցի , ելան հագուեցան , եւ հագիւ թէ վայրկեան մը հեռացայ իրենցմէ , դարձայ տեսայ որ աներեւոյթ եղեր են , եւ թողեր են զիս այնպիսի տեղ մը՝ որն որ ամենեւին անծանօթ էր ինծի : Հազար ու մէկ մտածմունքի մէջ ընկղմած քացի կաշիին վրայ փռուեցայ , որն որ անկողնոյ տեղ կը ծառայէր ինծի . ետքը իմ փոքրու գութեանս վրայ ամբնջալով մէկէն ոտք ելայ , համետեցի ձիս , սանձը ձեռքս առած ինքզինքս բաղդին յանձնելով ճամբայ ելայ : Երկու հնդկաստանցի իմ խեղճ վիճակիս վրայ ցաւելով , Փաքիր ըսուած դատարկաշրջիկներէն մէկ մը բռնեցին եւ ինծի ուղեցոյց տուին որն որ ռուփի մը առնելու յուսով հաւանեցաւ հետս գալու : Վանի մը օր ան տառներու , անապատներու , թուփերու , լեռանց խողովներու , կատաղի գազաններու եւ աւազակներու բոյներու մէջէն անցընելէն ետքը , եւ քանի մը անգամալ զինուորներու պատահելէն ետքը , որոնք անցագիր կ'ուզէին , եւ ամենուն ալ պատասխան իմ ատրճանակս կը ցուցընէի , ասանկով հասանք Փօլի՝ որն որ համանուն գետին եզերքը բարեզուարճ տեղ մըն է ծովուն մօտ , : Եւ քրդիլ հոն իբրեւ գաղղիացի սպայ մը ճանչցուեցաւ , եւ առաջարկեց որ զինքը հոնկէ Վալկաթա խաւրեն : Բայց աւելի կ'ընտրէր որ եւ իցէ վտանգ , քան թէ գիշերով բացօթեայ կենալ այնպիսի տեղեր ուր որ խիստ շատ վագրեր ու արջեր կը գտնուին : Եւ պատուանունս իրեն օգտակար եղաւ , ինչպէս նաեւ Պալա-

սօրի մէջ , եւ շատ մարդասիրական ընդունելութիւն գտաւ Սամալբարաս Սաւայէն , որն որ իրեն կենաց ապահովութեանը համար պահապան զօրքեր հետը դրաւ : Հազիւ թէ աս վերջի քաղաքսանցեր էր , եւ ահա նորանոր վտանգներու պատահեցաւ . նոյն տեղուանքը բոլոր անապատ դարձեր էր եւ Ղակրունաթի Փաքիրներէն թալուած . մեր ճանապարհորդը անանկ անտառներու մէջէն անցաւ՝ որոնք վագրերով լեցուն էին , արեւը կը մտնար եւ ամէն տեղ տխրութիւնը կը պատէր : “ Եւելի կ'ընտրէի , կ'ըսէ , ինքզինքս ան թափառական Փաքիրներուն ձեռքը տալ քան թէ վագրերու . եւ ասանկով ճամբաս կը շարունակէի : Եւ Փաքիրները ուխտաւորներ են , որոնք Սիոյ կողմերէն մէկիկ մէկիկ Ղակրունաթ կուգան , հնդկաստանի թերակղզիէն , Պենկալայէն , Սաթարստանէն , եւ այլն : Երբոր քաղաքը մտնան՝ պարտաւորուած են մարդ գլուխ երկու ռուփի վճարելու . եւ գէթ մէկ ու կէս ռուփի ալ Սակոտին առաջին մեծ պրահմային , որպէս զի կարենան Ղակրունաթիներկայանալ : Երբոր ուխտերնին կը կատարեն , կը միանան եւ բանակ մը կը կազմեն եւ կ'երթան տուրք կ'առնուն աս կամ ան գաւառներէն , եւ մերթ ալ կը կողոպտեն , կ'այրեն , կ'աւրըշտըկեն եւ շատ անգամ կը բռնադատեն Սաւանները անձնատուր ըլլալու : Եւ Փաքիրները՝ որոնց օր ես հանդիպեցայ , գրեթէ վեց հազարի չափ կային : Եւ բանակիս առաջապահներէն , որոնք 400 կային , ճամբաս արգիլուեցաւ . իմ առաջնորդս իրենց կրօնական մեծարանքը ընելէն ետքը , որ իրենց լեզուով կ'ըսեն Նաճա-Նօրոկ , որ ըսել է կռիւմ զձեզ յօգնութիւն , օրհնեմ զձեզ , Սիւնու ցըցուց Սամալբարաս Սաւային տուած անցագիրը , եւ ինծի համար ըսաւ թէ Զանտեռնակորի կործանմանէն փախած գաղղիացի մըն եմ , եւ թէ կը փութամ ժամ մը առաջ Սոնաիշերի հասնիլ : Իմ ողորմելի կարասիքս ալ հաստատութիւն մը տուաւ իր խօսքին , եւ յարգութեամբ մը Սա-

ճային կնիքը սրագնեւով, ինծի բարի ճամբայ մաղթեցին ։

Իս դժուարին և վտանգաւոր ուղևորութեան ատենը՝ Լեւոնի ընտանիքը երբեմն զինքը մեծամեծ վտանգներու մէջ ձգեց, և անգամ մը քիչ մնաց կեանքն ալ պիտի կը կորսնցընէր ։ Իս բանս Փիփլիի մէջ հանդիպեցաւ ։

« Լեւոն, կ'ըսէ, աս քաղաքս կը միտնայի՝ ցած դէմքով մարդ մը մօտեցաւ ինծի, ձեռքը հաստ գաւազան մը և ձիւս սանձէն բռնելով ինծի հրամայեց որ կենամ. մէկէն ձախ ձեռքով ապտակ մը զարկի և աջով ալ սուրը դուրս քաշեցի ։ Եսիկայ թողուց զիս և սկսաւ կատաղածի պէս դէպ'ի դատաւորին վազել՝ եղած նախատանացը փոխարէն ուղեւոր ։ Ինչ մը ատենէն երկու հարիւրի չափ զինուոր չորս դիս առին, և զիս բռնելով տարին դատաւորին առջև հանեցին ։ Որն որ իր իրեք խորհրդականներովը տանը մէջ ինծի կը սպասէր ։ Երբոր գաւիթը մտայ, տեսայ որ բոլոր հետս եղողները զէնքերնին վար թողած գետինը նստան, և ատեանին դրան քովը կեցած էր ան մարդը որուն որ ես զարկի, որն որ դիւահարի մը պէս կը պոռար՝ դէմքը և բազուկները ցուցնելով ։ Ինչակ վեր ելլալով ուղեցի ատենանը մտնալ, բայց վարը զիս արգիլեցին, և չորս ալ պահանորդ հետս դրին ։ Ես ատենը բանին ինչ ըլլալը իմացայ, և մէկէն մտքիս մէջ որոշեցի և ունեցած ատրճանակս ձեռք առի որ՝ ով որ համարձակի վրաս գալու, գետին պառկեցընեմ զինքը ։ Պատաւորը իր հասակէն վեր ծանրութեամբ մը, որովհետեւ դեռ երիտասարդ մըն էր, առաջնորդս վեր կանչել տուաւ, և իմ ով ըլլալս և ուր երթալս հարցուց անոր ։ Եսիկայ ուղեց զիս արդարացընել, բայց դատաւորը առանց 'ի գութ շարժելու տառուերկու գաւազանի հարուած կռնկին զարնել կուտայ ։ Ինչ և իցէ բանը յարմարեցաւ, բայց ետքը ինծի ըսին թէ չորս կամ հինգ թէսքիէն՝ զատ ուրիշ տուրք

մը չէի վճարած, և թէպէտ Պենկալացիները՝ որոնք հետս էին, ազատ էին աս տուրքէս, և զարկած մարդուս համար տուածելու բան մը չունէի, բայց հանդերձ այսու ամենայնիւ պէտք էր որ վեց հարիւր ուսիի վճարէի ։ Երբոր տեսայ որ սկսան մարդասիրաբար վարուիլ, քիչ մը սիրտ առի ու ըսի թէ ես Ղակրունաթի ուխտաւոր չլլալով վճարելու պարտք չունէի ։ Ետքը որոշեցին որ գէթ երկու հարիւր ուսիի վճարեմ. ես ամենեւին վճարելու յանձն չէի առնուր, վասն զի պարտականութիւն չունէի, ևս առաւել որ քովս բան մը չունէի ։ Խորհրդականները երբոր տեսան թէ յանձն չեմ առնուր, դատաւորին հետ խորհուրդի նըստեցան ։ Երեւոյ նայուածքէն և թարգմանին գէշ կերպերէն անյաջող ելք մը կը գուշակէի ։ Եւ ահա աս միջոցիս ձեպընթաց կառքը հասաւ, որուն մէջն էր Ռամա-Բանտէլի Լեւոնը ։ Եսիկայ Պառպաթի Յուլցտարին կամ իշխանին Փիփլի տեղակալին գրած թուղթը կարդալով, ամէն բան կերպարանափոխ եղաւ ։ Օրնուորները իմ դատախազիս թեկէն բռնելով դուրս վարեցին, և ինծի ալ ըսին որ իմ բանիս կըրնամ երթալ. ետքէն իմացայ որ բերդին մէջ հինգ ձիաւոր կայ եղեր իմ կենացս դարանակալ, անանկ որ եթէ Ռամա-Բանտէլի Լեւոնը քիչ մըն ալ ուշանալու ըլլար, հաւանականաբար նոյն օրը իմ կենացս վերջին օրը պիտի ըլլար ։

Ետքը Ղակրունաթը անցնելէն ետքը Լանժամ հասաւ, որ Տէքանի Սուպահին առաջին քաղաքն էր. աս ճամբորդութիւնը քառասուն օր քշեց, և ամէն տեսակ վտանգներով ու դժուարութիւններով լի եղաւ ։ Լանժամի Պաղղիացուց վաճառատան գլխաւորը շատ դժուարութեամբ ճանցաւ, թէպէտ և Բանտիշէրի տեսեր էր զինքը, որովհետեւ շատ փոխուած էր, արեւադարձի արեւը երեսը ձեռքը և ոտուրները այրեր սեցուցեր էր զինքը, և գրեթէ սև հնդիկ մը դարձած էր ։ Եստ արժանեացը պատիւ գտնալով,

1. Հոն տեղաց ստակ մըն է ։

հոն տեղ կեցաւ խել մը ատեն ոյժ առնելու համար : Ղամբորդութեան մնացած մասը Շիլքաքէլի նահանգին մէջ ըրաւ Սաժուլի Ռարամէն և Ռաքաքաթէն անցնելով, ուր որ թէպէտ և կարգէ դուրս դիպուածներ չհանդիպեցան, բայց բաւական նեղութիւններ և վտանգներ գլխէն անցան : Երբ ընդհին երբեմն ծովով և երբեմն ցամաքով ճամբայ ըրաւ, երբեմն ալ պատգարակով, և շատ անգամ բոսիկ ոտքով մորենիններուն և արեւակէզ աւաղուտներու մէջէն ճամբայ ընելով : Վարչիկներու զգեստ հագած էր, որպէս զի Եւրոպացի ըլլալը չճանցուի և անով չբռնուի : միշտ վախի մէջ էր որ չըլլայ թէ Ենգղիացւոց մատնուի, անոր համար կ'ու-

զէր որ միշտ զինեալ ըլլան իր ուղեցոյցները : Երբոր Ռոնտիշերի հասաւ, հաշիւ ըրաւ որ Վալքանէն ինչուան հոն հարիւր մէկ օր ճամբայ ըրեր էր, որոնց յիսունըվեց օրը քալելով և քառասունըհինգ օր ալ այլ և այլ տեղուանք հանգիստ առնելով անցուցեր էր : Երբ զի դուրս ուրախութիւն պատճառեց իրեն հոն հասնիլը : Երբ եղբայրն և բարեկամները զինքը մեծ խնդութեան դուռնեցան : վասն զի պարոն Եյրէթ իրենց շատ անգամ ըսեր էր թէ մեռած է ինքը, և իրեն մահուան լուրը, որ նախ Պենկալայի մէջ հռչակուեր էր, իր բազմավտանգ ուղևորութեանը ատեն հաստատուեր էր :

կը շարունակուի :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց

Արևելեան վերջին խնդիրն ու պատերազմը :

1855 — ՄԱՅԻՍ

Գաղափարի յօդուած առ առաջարկեալ Գաղափար : Եթէ Ռուսաստան սահմանեալ նաւերուն թիւէն աւելի նաւ ուղենայ պահէ Սև ծովուն մէջ, առ պայմանս միաբան իրեն առաջարկուելէն ետքը, պատերազմի գէպք պիտի սեպուի առ իրեն պահանջ մուկը, որպէս զի բռնագատեն զՌուսը յանձն առնելու առ պայմանս Եւրոպայի ընդհանուր օգտին համար :

— Պաշտօնագիր Պուլ կոմսին առ պարոն Հիւպ. ներ գեսպան Աստրիոյ 'ի Բարիզ. կը յանձնէ մասնաւորապէս որ ընդունելի ընել տայ Գաղափար իր ըրած առաջարկութիւնը . Աստրիոյ գահէին կարծիքն է որ չէ թէ միայն Ռուսաց նաւական զօրութիւնը նուազեցնելով, այլ թէ կարելի ալ ըլլար բոլորովին փճացնել ևս, բայց հանգերձ այսու ամենայնիւ կարելի չէ Ռուսաց ազգեցութիւնը նուազեցնել որ իրեն աշխարհագրական դիրքին պատճառաւ ունի Բարձրագոյն դրան նկատմամբ . անոր համար ուրիշ բան պէտք չէ ընել, բայց եթէ անանկ արգելքներ դնել որ իրեն դիրքին համար ունեցած առաւելութիւններովը չկարենայ զեղծանիլ :

1 Տես հտ. ԺԳ. երես 15, 92, 159, 191, 223, 255, 286, 334. հտ. ԺԴ. երես 11, 82, 129, 162, 227, 275, 307, 355, 371. ԺԵ. երես 15, 51, 131, 163 :

Աստրիա չկարծեր որ Ռուսաստան յանձն առնու իր նաւական զօրութիւնը նուազեցնել գէպք տեմբերի 2ին գաշնագորութեան մէջի եղածին համեմատ : Իսկ թէ Արևմտեան տէրութիւնները պատերազմի արկածից կամ բազմին ուղենան ոպասել, որ իրենց ըրած զոհերուն համեմատ աւելի շահաւէտ վախճան մը ունենան, Աստրիա հանդարտ իր տեղը կը կենայ, որ ատենին կարենայ խաղաղութեան ժողովոյն սկսիլը նորէն առաջարկել :

22. Գաղափարից Ռուսաց հետ կը պատերազմին Սևաստոփոլի առջև եղած գերեզմանատան ձորին մէջ. Գաղափարից քանի մը անգամ յարձակմունք կ'ընեն Ռուսաց պատնէշներուն վրայ. 23էն 24 լուսնալու գիշերը նորէն կը սկսին Գաղափարից յարձակմունքը աւելի կատաղութեամբ. վերջապէս կը տիրեն Գաղափարից պատնէշներուն իրենց Սալ զօրավարին առաջնորդութեամբ. երկու կողմանէ ալ կորուստը խիստ սաստիկ կ'ըլլայ : Ռուսացմէ Ատէրպէրկ զօրավարը կը մեռնի : 25ին գաշնակիցք Չեռնայի կը տիրեն :

23. Վալքաքի կոմսը Նեպելոս կոմսին մայիսի 10ին հրատարակած շրջաբերականին պատասխան տալով կ'ընէ, թէ պատերազմին երկըննդուն պատճառն ու հեռանքները Ռուսաց վրայ կ'իյնան. որովհետև Գաղափար և Անգղիոյ ըրած առաջարկութիւնները իրեն պատուոյն չէին գալիք. և թէ ինքը ուղենար հրաժարիլ իր Սև ծովուն մէջի ունեցած տարապայման նաւական զօրութենէն, իրենք յանձն կ'առնուին նորէն ժողովքի նստիլ :